**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

**Որոշում**

Գրանցման ամսաթիվ՝ 14/12/2005

Հրապարակման ամսաթիվ՝ 26/12/2005

29/07/2005 թիվ 389Ն

# ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՎԱՐԿԵՐԻ ԺԱՄԿԵՏԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈՔՐԱԾԱՎԱԼ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 10-րդ մասը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

**Ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել կարճաժամկետ վարկերի ժամկետայնությունը և փոքրածավալ գումարների չափը՝ համաձայն հավելված 1-ի (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող 10-րդ օրվանից:

**Հայաստանի Հանրապետության**
**կենտրոնական բանկի նախագահ** **Տ. Սարգսյան**

2005 թ. օգոստոսի 08
Երևան

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
խորհրդի 2005 թվականի հուլիսի 29-ի թիվ 387 Ն որոշման

## ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՎԱՐԿԵՐԻ ԺԱՄԿԵՏԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈՔՐԱԾԱՎԱԼ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՉԱՓԸ

1. Կարճաժամկետ են համարվում 180 օրվանից ոչ ավելի ժամկետով ստացված կամ տրամադրված վարկերը և փոխառությունները:
2. Վարկերի, փոխառությունների եւ ուղղակի ներդրումների մարմանն ուղղված փոքրածավալ գումարների վճարումներ են համարվում ամսական մինչև 25 մլն դրամ գումարի վճարումները: